ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԱԾՁԲ-9-5

ք. Երևան « 8 » հուլիսի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից և «Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս գործադիր տնօրեն Օ. Գրիգորյանի, ով գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող №1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի №1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Սույն Պայմանագրի գործողությունը տարածվում է 2019թ. հունվարի 1-ից հետո կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված (5) հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 7,735,100 (յոթ միլիոն յոթ հարյուր երեսունհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ.-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Սույն Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է՝ 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Սույն պայմանագրի № 1, 2, 3 և 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011006500
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն»ՊՈԱԿ
ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 915013000186
ՀՎՀՀ 90007598
Տնօրեն

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
«ՄԱԾՁԲ-9-5» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ծառայության անվանում	Տեխնիկական ցուցանիշներ
1.	Կենսանմուշների (թարախ, մեզ, խորխ, պունկտատ, կրծքի կաթ և այլն) մանրէաբանական հետազոտություն, օդակաթիլային վարակների ախտորոշում (մենինգիտ, դիֆթերիա, կապույտ և հարկապույտ հազ), հետազոտություն լիստերիաների, ստաֆիլոկոկերի, ստրեպտոկոկերի, հեմոֆիլների, պնևմոկոկերի վերաբերյալ	Կլինիկական և այլ ախտաբանական նյութի հետազոտության իրականացում, օդակաթիլային վարակների ախտորոշում՝ ախտածին և պայմանական ախտածին մանրէների նկատմամբ, կենսաքիմիական և շճաբանական հետազոտություն: (ԽՍՀՄ ԱՆ 22.04.1985թ N 535 հրաման)
2.	Դիզբակտերիոզի,հեմոկուլտուրայի հետազոտություններ, արյան մանրէազերծության որոշում, հետազոտություններ լիստերիաների, կամպիլոբակտերիաների վերաբերյալ մանրէաբանական եղանակով (նաև արտաքին միջավայրում) և աճեցման համար հատուկ պայմաններ և անուցող միջավայրեր պահանջող այլ ախտածին մանրէների վերաբերյալ	Կղանքի համապատասխան ծավալի նմուշի հետազոտությամբ որոշել աղիների միկրոֆլորայի սահմանված կազմի և դրանց քանակի նորմայից շեղումները: Հեմոկուլտուրայի հետազոտության իրականա- ցում, ախտածին և պայմանական ախտածին մանրէների նկատմամբ, կենսաքիմիական և շճաբանական հետազոտություն: (ԽՍՀՄ ԱՆ 22.04.1985թ N 535 հրաման): Մանրէաբանական հետազոտությամբ բացառել համապատասխան ծավալի արյան նմուշում մանրէների առկայությունը:
3.	Մանրէաբանական հետազոտություն աղիքային վարակների ախտորոշման նպատակով	Կղանքի մանրէաբանական հետազոտությամբ հիվանդների աղիներում ախտածին, սուր աղիքային վարակների՝ որովայնային տիֆի, պարատիֆերի, սալմոնելյոզի և դիզենտերիայի հարուցիչների հայտնաբերում (ԽՍՀՄ ԱՆ 22.04.1985թ N 535 հրաման)
4.	Հակամանրէային պատրաստուկների նկատմամբ զգայունության որոշում	Մարդու կենսանմուշներում հայտնաբերված մանրէների նկատմամբ հակաբիոտիկների զգայունության որոշում
5.	Լվացուկ՝ ախտահանման և մանրէազերծման դրակի հսկողության վերաբերյալ	Մանրէաբանական հետազոտությամբ պարզել արտաքին միջավայրի մակերեսներից, ձեռքերից և աշխատանքային արտահագուստից վերցված լվացուկների մանրէաբանական ախտոտվածությունը
6.	Վիրուսային վարակների նկատմամբ հետազոտություններ ԻՖԱ-մեթոդով	Հետազոտվող նյութի նմուշում՝ իմունոֆերմենտային հետազոտությունների մեթոդով պարզել հեպատիտ A, B, C, E, կարմրախտի, կարմրուկի, ինֆեկցիոն մոնոնուկլեոզի, համաճարակաբանական խոզուկի հակամարմինների և հակածինների առկայությունը:
7.	Շճաբանական հետազոտություններ հատուկ վտանգավոր վարակների (բրուցելոզի, բծավոր տիֆի, տուլարեմիայի) նկատմամբ	Արյան շճաբանական հետազոտության միջոցով հատուկ վտանգավոր վարակների նկատմամբ հակամարմինների հայտնաբերում:
8.	Կղանքի հետազոտություն հելմինթների ձվիկների և նախակենդանիների նկատմամբ	Կղանքի մակաբուծաբանական հետազոտությամբ հետևյալ նախակենդանիների և հելմինթների՝ ասկարիդ, մազագլուխ, սրատուտ, թզուկ երիզորդ, երիզորդներ, լյամբլիա,բալանտիդիա հայտաբերում (ՀՀ ԱՆ 10.09.2014թ N 2135-Ա հրաման)
9.	Օբլիգատ և ռիսկի խմբում ընդգրկված անձնաց հետազոտություն մակաբուծային վարակների հելմինտակրության վերաբերյալ	Կղանքի մակաբուծաբանական հետազոտությամբ հետևյալ նախակենդանիների և հելմինթների՝ ասկարիդ, մազագլուխ, սրատուտ, թզուկ երիզորդ, երիզորդներ, լյամբլիա,բալանտիդիա հայտաբերում (ՀՀ ԱՆ 10.09.2014թ N 2135-Ա հրաման)
10.	Օբլիգատ և ռիսկի խմբում ընդգրկված անձնաց հետազոտություն աղիքային վարակների բացիլակրության վերաբերյալ	Առողջ մանրէակրության հայտնաբերում : Կղանքի մանրէաբանական հետազոտությամբ առողջ մարդու աղիներում ախտածին, սուր աղիքային վարակների՝ որովայնային տիֆի, պարատիֆերի, սալմոնելյոզի և դիզենտերիայի հարուցիչների առկայության որոշում (ԽՍՀՄ ԱՆ 22.04.1985թ N 535 հրաման)
11.	Օբլիգատ և ռիսկի խմբում ընդգրկված անձնաց ստաֆիլակոկակրության վերաբերյալ հետազոտություն	Առողջ մարդու քիթ-ըմպանի լորձաթաղանթից վերցված քսուկում մանրէաբանական հետազոտությամբ ախտածին ստաֆիլոկոկի առկայության որոշում (ԽՍՀՄ ԱՆ 31.07.1975թ N 720 հրաման)
12.	Խմելու ջուր, բաց ջրամբարների և լողավազանների ջուր, սննդային հումք և սննդամթերք, սննդի հետ շփվող արտադրանք և այլն	1 մլ-ում մանրէների ընդհանուր քանակի, 100 մլ-ում ընդհանուր կոլիֆորմ մանրէների քանակի,100 մլ-ում ջերմատոլերանտ կոլիֆորմ մանրէների քանակի որոշմամբ պարզել միկրոկենսաբանական տեսակետից խմելու ջրի համապատասխանությունը սահմանված նորմերին (ՀՀ ԱՆ 25.12.2002թ N 876 հրաման ՍԿՆ N2-III-Ա2-1)
13.	Խմելու ջրի զգայորոշման ցուցանիշների հետազոտություն	Խմելու ջրի նմուշի ֆիզիկո-քիմիական ցուցանիշների՝ համի, հոտի, գույնի, պղտորության որոշմամբ պարզել խմելու ջրի համապատասխանությունը սահմանված նորմերին (ՀՀ ԱՆ 25.12.2002թ N 876 հրաման ՍԿՆ N2-III-Ա2-1)
14.	Խմելու ջրի դասական, քիմիական հետազոտություն՝ ամոնիակի (NH3) և ամոնիումի իոնների (NH4)	Խմելու ջրի նմուշում ամոնիակի և ամոնիումի իոնների առկայության և դրանց զանգվածային կոնցենտրացիայի որոշմամբ պարզել խմելու ջրի համապատասխանությունը սահմանված նորմերին, (ՀՀ ԱՆ 25.12.2002թ N 876 հրաման ՍԿՆ N2-III-Ա2-1)
15.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ նիտրիտներ	Խմելու ջրի նմուշում նիտրիտներ առկայության և դրանց զանգվածային կոնցենտրացիայի որոշմամբ պարզել խմելու ջրի համապատասխանությունը սահմանված նորմերին, (ՀՀ ԱՆ 25.12.2002թ N 876 հրաման ՍԿՆ N2-III-Ա2-1)
16.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ ընդհանուր կոշտություն	Խմելու ջրի նմուշի ընդհանուր կոշտության որոշմամբ պարզել խմելու ջրի համապատասխանությունը սահմանված նորմերին, (ՀՀ ԱՆ 25.12.2002թ N 876 հրաման ՍԿՆ N2-III-Ա2-1)
17.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ քլորիդներ	Խմելու ջրի նմուշում քլորիդների պարունակության որոշմամբ պարզել խմելու ջրի համապատասխանությունը

		սահմանված նորմերին (ՀՀ ԱՆ 25.12.2002թ N 876 հրաման ՄՆԿ N2-III-Ա2-1)
18.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ սուլֆատներ	Խմելու ջրի նմուշում սուլֆատների պարունակության որոշմամբ պարզել խմելու ջրի համապատասխանությունը սահմանված նորմերին (ՀՀ ԱՆ 25.12.2002թ N 876 հրաման ՄՆԿ N2-III-Ա2-1)
19.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ ֆտոր	Խմելու ջրի նմուշում ֆտորիդների զանգվածային կոնցենտրացիայի որոշմամբ պարզել խմելու ջրի համապատասխանությունը սահմանված նորմերին, (ՀՀ ԱՆ 25.12.2002թ N 876 հրաման ՄՆԿ N2-III-Ա2-1)
20.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ կապար	Խմելու ջրի նմուշում կապարի որոշմամբ պարզել խմելու ջրի համապատասխանությունը սահմանված նորմերին (ՀՀ ԱՆ 25.12.2002թ N 876 հրաման ՄՆԿ N2-III-Ա2-1)
21.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ ընդհանուր երկաթ	Խմելու ջրի նմուշի ընդհանուր երկաթի որոշմամբ պարզել խմելու ջրի համապատասխանությունը սահմանված նորմերին (ՀՀ ԱՆ 25.12.2002թ N 876 հրաման ՄՆԿ N2-III-Ա2-1)

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ծառայության անվանումը	Մատուցման վայր	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի գին /դրամ/	Ժամկետ
1.	Կենդանածուշների (թարախ, մեզ, խորխ, պունկտատ, կղիշի կաթ և այլն) մանրէաբանական հետազոտություն, օդակաթիլային վարակների ախտորոշում (մենինգիտ, դիֆթերիա, կապույտ և հարկապույտ հազ), հետազոտություն լիստերիաների, ստաֆիլոկոկերի, ստրեպտոկոկերի, հեմոֆիլների, պնևմոկոկերի վերաբերյալ	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ	Ըստ Պահանջարկի	4000.00	Գնումը կկատարվի համապատասխան ստորաբաժանման (զորամասի) պատվերների հիման վրա 2019թ. ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ..
2.	Դիզբակտերիոզի,հեմոկուլտուրայի հետազոտություններ, արյան մանրէազերծության որոշում, հետազոտություններ լիստերիաների, կամպիլոբակտերիաների վերիաբրոլյալ մանրէաբանական եղանակով (նաև արտաքին միջավայրում) և աճեցման համար հատուկ պայմաններ և սնուցող միջավայրեր պահանջող այլ ախտածին մանրէների վերաբերյալ	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		5000.00	
3.	Մանրէաբանական հետազոտություն աղիքային վարակների ախտորոշման նպատակով	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		2000.00	
4.	Հակամանրէային պատրաստուկների նկատմամբ զգայունության որոշում	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		2000.00	
5.	Լվացուկ՝ ախտահանման և մանրէազերծման որակի հսկողության վերաբերյալ	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		300.00	
6.	Վիրուսային վարակների նկատմամբ հետազոտություններ ԻՖԱ-մեթոդով	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		5000.00	
7.	Շճաբանական հետազոտություններ հատուկ վտանգավոր վարակների (բրուցելոզի, բծավոր տիֆի, տուլարեմիայի) նկատմամբ	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		4000.00	
8.	Կղանքի հետազոտություն հելմինթների ձվիկների և նախակենդանիների նկատմամբ	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1500.00	
9.	Օրլիգատ և ռիսկի խմբում ընդգրկված անձնաց հետազոտություն մակաբուծային վարակների հելմինտակրության վերաբերյալ	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1000.00	
10.	Օրլիգատ և ռիսկի խմբում ընդգրկված անձնաց հետազոտություն աղիքային վարակների բացիլակրության վերաբերյալ	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1000.00	
11.	Օրլիգատ և ռիսկի խմբում ընդգրկված անձնաց ստաֆիլակոկակրության վերաբերյալ հետազոտություն	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1000.00	
12.	Խմելու ջուր, բաց ջրամբարների և լողավազանների ջուր, սննդային հումք և սննդամթերք, սննդի հետ շփվող արտադրանք և այլն	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1500.00	
13.	Խմելու ջրի զգայորոշման ցուցանիշների հետազոտություն	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		100.00	
14.	Խմելու ջրի դասական, քիմիական հետազոտություն՝ ամոնիակի (NH3) և ամոնիումի իոնների (NH4)	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1500.00	
15.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ նիտրիտներ	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1500.00	
16.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ ընդհանուր կոշտություն	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1500.00	
17.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ քլորիդներ	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1500.00	
18.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ սուլֆատներ	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1500.00	
19.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ ֆտոր	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1500.00	
20.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ կապար	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1500.00	
21.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ ընդհանուր երկաթ	ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1500.00	

Սույն պայմանագրի առավելագույն գինը կազմում է 7,735,100 ՀՀ դրամ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» ՊՈԱԿ
Տնօրեն

[illegible]ՐՅԱՆ

Հավելված N 2
«ՄԱԾՁԲ-9-5» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանումը	CPV կոդ	Պայմանագրի ընդհանուր առավելագույն գին	Վճարումը կիրականացվի ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից, ընդ որում՝						
				հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ
1.	Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայություններ	85111120/3	7,735,100	850,000	1,700,000	2,550,000	3,400,000	4,250,000	5,100,000	7,735,100

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:
Վճարումներն կիրականացվեն հանձնման-ընդունման արձանագրությունները ստորագրելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» ՊՈԱԿ
Տնօրեն

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված N 3
«ՄԱԾՁԲ-9-5» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«ՄԱԾՁԲ-9-5» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն